ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/24

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2021թ. թիվ 26/26/793-2021 գրությամբ «Սայտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 22.01.2021թ. թիվ Ե/40/130-21 գրության հիման վրա 25.01.2021թ. թիվ 26/26/793-2021 գրությամբ նախաձեռնել է «Սայտոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սայտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սայտոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սայտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/24 ընթացակարգի շրջանակներում 05.02.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.01.2021թ. թիվ Ե/40/130-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-93/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սայտոն» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի՝ 2020թ. օգոստոսի 24-ի թիվ 2.2 որոշմամբ 8-րդ չափաբաժնով «Սայտոն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել սողնակների, կափույրների և փականների մատակարարման պայմանագիր: «Սայտոն» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 16-ին կնքվել է թիվ 01/294 պայմանագիրը:

«Սայտոն» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չեն ընդունվել ապրանքի որակը հավաստող՝ պայմանագրով սահմանված ուղեկցող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ս/թ հունվարի 18-ի թիվ Ե/13/64-21 գրությամբ «Սայտոն» ՍՊԸ-ն ծանուցվել է կողմերի միջև 2020թ. սեպտեմբերի 16-ին կնքված թիվ 01/294 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, որը հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/24 ընթացակարգի շրջանակներում 05.02.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Սայտոն» ՍՊԸ-ի միջև 16.09.2020թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-93/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար սողնակների, կափույրների և փականների մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված փականը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքները պետք է լինեն նոր, պետք է ունենան որակի հավաստագիր կամ անձնագիր՝ փորձարկման արդյունքների, երաշխիքային պարտավորությունների և ժամկետի վերաբերյալ նշումով, շահագործման հրահանք և տեխնիկական բնութագիր՝ ներառյալ վերանորոգման մասին տեղեկությամբ: 4-րդ դասի արմատուրաները ըստ ՀՊ-001-97-ի, ունենան հավաքական գծագիր պահեստամասերի անվանացանկով, իրանի և արագամաշ մասերի գծագրեր, ամրության հաշվարկից քաղվածք, համապատասխանեն ՕՏՏ 1.3.3.99.0141-2012 տեխնիկական պահանջներին: Փաթեթավորումը պետք է ապահովի ապրանքի մեխանիկական ամբողջականությունը, փաստաթղթերը լինեն թարգմանված հայերեն կամ ռուսերեն լեզվով:

3. Պատվիրատուն «Սայտոն» ՍՊԸ-ին ուղղված 18.01.2021թ. թիվ Ե/13/64-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար փականների (այսուհետ՝ ապրանք) ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-93/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «Սայտոն» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. Սեպտեմբերի 16-ին կնքվել է թիվ 01/294 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 548 000 (հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարված 4 հատ 17с11нж

տեսակի ապահովիչ փականը, որի ընդհանուր գինը կազմում է 548 000 (հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չի ընդունվել ապրանքի որակը հավաստող՝ պայմանագրով սահմանված ուղեկցող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

-2.4.1 կետի վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով

-2.4.4 կետի վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

-2.1.7 կետի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սայտոն» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 16-ին կնքած թիվ 01/294 պայմանագիրը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 20.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2021թ. թիվ 26/26/793-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 22.01.2021թ. թիվ Ե/40/130-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Սայտոն» ՍՊԸ-ի միջև 16.09.2020թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-93/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար սողնակների, կափույրների և փականների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով, նախատեսված փականը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքները պետք է լինեն նոր, ***պետք է ունենան որակի հավաստագիր կամ անձնագիր՝ փորձարկման արդյունքների, երաշխիքային պարտավորությունների և ժամկետի վերաբերյալ նշումով, շահագործման հրահանք և տեխնիկական բնութագիր՝ ներառյալ վերանորոգման մասին տեղեկությամբ:*** 4-րդ դասի արմատուրաները ըստ ՀՊ-001-97-ի, ունենան հավաքական գծագիր պահեստամասերի անվանացանկով, իրանի և արագամաշ մասերի գծագրեր, ամրության հաշվարկից քաղվածք, համապատասխանեն ՕՏՏ 1.3.3.99.0141-2012 տեխնիկական պահանջներին: Փաթեթավորումը պետք է ապահովի ապրանքի մեխանիկական ամբողջականությունը, ***փաստաթղթերը լինեն թարգմանված հայերեն կամ ռուսերեն լեզվով:***

Պատվիրատուն «Սայտոն» ՍՊԸ-ին ուղղված 18.01.2021թ. թիվ Ե/13/64-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար փականների (այսուհետ՝ ապրանք) ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-93/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «Սայտոն» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. Սեպտեմբերի 16-ին կնքվել է թիվ 01/294 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 548 000 (հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: ***Պայմանագրով մատակարարված 4 հատ 17c11нж տեսակի ապահովիչ փականը, որի ընդհանուր գինը կազմում է 548 000 (հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չի ընդունվել ապրանքի որակը հավաստող՝ պայմանագրով սահմանված ուղեկցող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:***

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

-2.4.1 կետի վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով

-2.4.4 կետի վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված

ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

-2.1.7 կետի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սայտոն» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 16-ին կնքած թիվ 01/294 պայմանագիրը»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 20.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>*** Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 11.02.2021թ. Hripsime.Ramazyan@anpp.am էլ. փոստի միջոցով դիմել է Պատվիրատուին և խնդրել հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Սայտոն» ՍՊԸ-ի միջև 16.09.2020թ. կնքված թիվ «01/294» ծածկագրով պայամանագիրը Պատվիրատուի կողմից 18.01.2021թ. լուծվել է:

Խնդրում եմ տրամադրել Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված ապրանքն առանց ապրանքի որակը հավաստող՝ պայմանագրով սահմանված ուղեկցող փաստաթղթերի մատակարարելու փաստը հավաստող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ հանձնման-ընդունման արձանագրությունը, ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ երկկողմ հաստատված փաստաթուղթը և Ընկերության

կողմից առանց ապրանքի որակը հավաստող փաստաթղթերի ապրանքը մատակարարելու փաստը ֆիքսելու վերաբերյալ փաստաթուղթ:

Միևնույն ժամանակ, խնդրում եմ պարզաբանել այն հանգամանքը, որ Ձեր կողմից Ընկերությանն ուղղված էլ. նամակում նշվել է, որ Ընկերության կողմից ապրանքը մատակարարվել է 03.10.2020թ., իսկ Ձեր կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված հաշիվ-վավերագրում որպես ապրանքի առաքման ամսաթիվ նշված է 29.10.2020թ.»:

Պատվիրատուի կողմից, ի պատասխան վերը շարադրված էլեկտրոնային նամակի, տրամադրվել են հետևյալ փաստաթղթերը.

1. 13.11.2020թ. կազմված թիվ 11-20-329 մուտքային վերահսկողության ակտը, համաձայն որի՝ «Սայտոն» ՍՊԸ-ի կողմից 8-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը մատակարարվել է 13.11.2020թ., և մատակարարված ապրանքի ուղեկցող փաստաթղթերի լրակազմությունը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին:

2. «Սայտոն» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Հովհաննիսյանի գրությունն ուղղված Պատվիրատուին, համաձայն որի՝ Ընկերությունը խնդրել է տալ հնարավորություն 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մատակարարված ապրանքի համար թիվ 01/294 պայմանագրով սահմանված պակաս փաստաթղթերը:

Պայմանագրի 2.2.4 ենթակետով սահմանված է՝ ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 5.3 ենթակետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,</u>*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով

սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,*** այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչը***

տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն և եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, ինչպես նաև պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը (Հավելված 3.1) առկա չեն, ուստիև նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Սայտոն» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետի խախտման փաստը և, որպես վերոնշվածի հետևանք, Պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափությունը:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Սայտոն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2021թ. թիվ 26/26/793-2021 գրությամբ «Սայտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**